ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /ԸՍՏ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԵՏԵՐԻ/

1. Պատիժների կատարում, վերահսկողության իրականացում, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ զեկույցների տրամադրում.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կողմից **2023 թվականի ընթացքում իրականացվել** է **8179** վարույթ, որոնցից **4798** պատիժ, **2515** վերահսկողություն, **866** վարույթ տնային կալանք և վարչական հսկողություն խափանման միջոցներ: Վարույթների ընդհանուր թվի մեջ ներառված չեն դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար ներկայացվող զեկույցները:

Հաշվետու ժամանակահատվածում պատիժներով և վերահսկողություններով իրականացվել է **7313 վարույթ**, իսկ **2022 թվականին՝ 6109** վարույթ: **2023 թվականին** իրականացված վարույթների թիվը **1204-ով (19,7%)** ավել է **2022 թվականի** նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում տուգանք պատժատեսակով գանձվել է 578.199.300 ՀՀ դրամ:

2022 թվականին գանձվել է **372.406.545 ՀՀ դրամ: 2023 թվականին** գանձվել է **205.792.755 ՀՀ դրամով (55,2%)** ավելի գումար:

Հաշվետու ժամանակահատվածում ստացվել է դատապարտյալի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու համար զեկույց կազմելու **809** ծանուցում, որոնց հիման վրա կազմվել է **723** զեկույց (**82**-ը դրական, իսկ **641**-ը բացասական եզրակացությամբ), իսկ **86-ը** գտնվում են կազմման փուլում:

Հաշվետու ժամանակահատվածում պրոբացիայի ծառայությունում առկա **7313 վարույթներով (**պատիժ և վերահսկողություն**)** իրականացված անձանցից **կրկնահանցագործություն կատարել է 102 անձ,** որը կազմում է Ծառայությունում հաշվառված շահառուների մոտ **1.3%-ը:**

2022 թվականին պրոբացիայի ծառայությունում եղած **6109 վարույթներով (պատիժ և վերահսկողություն)** հաշվառված անձանցից **կրկնահանցագործություն կատարել է 49 անձ,** որը կազմում է ծառայությունում հաշվառված շահառուների մոտ **0.08%-ը:**

Պատիժներ

Հաշվետու ժամանակահատվածում պատիժներով իրականացվել է 4798 վարույթ, իսկ 2022 թվականի ընթացքում՝ **3690** վարույթ: 2023 թվականին իրականացված վարույթների թիվը **1108-ով (30%)** ավելի է 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Տուգանք. Հաշվետու ժամանակահատվածում տուգանք պատժատեսակով իրականացվել է **3913** վարույթ, իսկ 2022 թվականին՝ **2759** վարույթ: 2023 թվականին իրականացված վարույթների թիվը **1154**-ով **(41,8%)** ավելի է 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

2023 թվականին գանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է **1.401.023.528** ՀՀ դրամ, որից **103.481.000** ՀՀ դրամի գանձման գործընթացը դադարեցվել է տարբեր հիմքերով, մասնավորապես մահվան, տուգանքը փոխարինվել է հանրային աշխատանքներ պատժատեսակով և օրենքով սահմանված այլ հիմքերով: **2023 թվականի** համար տուգանքի կատարման պարտավորությունը կազմում է **891.813.000** ՀՀ դրամ, որից հաշվետու ժամանակահատվածում գանձվել է **578.199.300** ՀՀ դրամ, շուրջ **64,8%**: Մնացորդը՝ **313.613.700** ՀՀ դրամը և **2024 թվականին** գանձման ենթակա գումարի չափը՝ **405.729.528** ՀՀ դրամը (ընդամենը **719.343.228** ՀՀ դրամ) փոխանցվել է **2024 թվական** և գտնվում է կատարման ընթացքում: Հաշվետու ժամանակաշրջանում **1566** վարույթի կատարումն ավարտվել է, իսկ **2347** վարույթ գտնվում է կատարման ընթացքում (տարաժամկետված, հետաձգված):

Հանրային աշխատանքներ. Հաշվետու ժամանակահատվածում հանրային աշխատանքներ պատժատեսակով իրականացվել է **533 վարույթ**, իսկ 2022 թվականին՝ **417** վարույթ: 2023 թվականին իրականացված վարույթների թիվը **116-ով** (**27,8%-ով)** ավելի է, 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ: Հաշվետու

ժամանակահատվածում **328** վարույթի կատարումն ավարտվել է, իսկ **205** վարույթ կատարման ընթացքում է:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **341 վարույթ,** իսկ **2022 թվականին՝ 514** վարույթ: 2023 թվականին իրականացված վարույթների թիվը **173-ով պակաս է** 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում **170** վարութի կատարումն ավարտվել է, իսկ **171** վարույթ կատարման ընթացքում է:

Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարել. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **5 վարույթ:**

Հաշվետու ժամանակահատվածում **1** վարույթի կատարումն ավարտվել է, իսկ **4-ը՝** կատարման ընթացքում են: 2022 թվականի այս պատժով վարույթ չի իրականացվել, քանի որ այն սկսվել է կիրառվել նոր քրեական օրենսգքրի ուժի մեջ մտնելուց հետո:

Ազատության սահմանափակում. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **6 վարույթ,** բոլորն էլ գտնվում են կատարման ընթացքում: 2022 թվականի այս պատժով վարույթ չի իրականացվել, քանի որ այն սկսվել է կիրառվել նոր քրեական օրենսգքրի ուժի մեջ մտնելուց հետո:

Վերահսկողություններ.

Պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **2202 վարույթ**, իսկ 2022 թվականին՝ **2039** վարույթ: 2023 թվականին իրականացված վարույթների թիվը **163** վարույթով (**7,9%-ով)** ավելի է, 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում **748** վարույթ ավարտվել է, իսկ **1454** վարույթ կատարման ընթացքում է:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **303 վարույթ**, իսկ 2022 թվականին՝ **373** վարույթ: 2023 թվականին իրականացված վարույթների թիվը **70-ով** պակաս է 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում **147** վարույթ ավարտվել է, իսկ **156** վարույթ կատարման ընթացքում է:

Պատժի կրման հետաձգում.

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **6 վարույթ,** 2022 թվականին՝ **5** վարույթ, որը **1-ով** ավելի է 2022թ. նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում **2** վարույթ ավարտվել է, իսկ **4** վարույթ կատարման ընթացքում է:

Անչափահասին քրեական պատասխանատվությունից ազատելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանիքի միջոցներ կիրառելով. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **4 վարույթ,** իսկ **2022 թվականի** ընթացքում՝ **2 վարույթ**:

Հաշվետու ժամանակահատվածում **1** վարույթ ավարտվել է, իսկ **3-ը**՝ գտնվում են կատարման ընթացքում:

Խափանման միջոցներ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **866 վարույթ, որից 638-ը տնային կալանք, իսկ 228-ը վարչական հսկողություն** խափանման միջոցներով:

Հաշվետու ժամանակահատվածում **285** վարույթ ավարտվել է, իսկ **581**-ը գտնվում են կատարման ընթացքում**, (405 տնային կալանք, 176 վարույթ վարչական հսկողություն)**:

2. Պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման և հասարակություն վերաինտեգրման միջոցառումներ և ծրագրեր.

Պրոբացիայի ծառայության միջնորդությամբ և իրականացված վերասոցիալականացման միջոցառումների արդյունքում աշխատանքի են տեղավորվել **13** շահառու, 2022թ. **30** շահառու:

Կրթական միջոցառումներին մասնակցել է **28 շահառու:** (շահառուներից ոմանք մասնակցել են 2 և ավելի տարբեր դասընթացների):

Մասնավորապես՝ **6-ը** մասնակցել են «Անգլերեն լեզու», **6-ը**՝ «Համակարգչային հմտություններ» դասընթացներին: Արարատ քաղաքում գործող մասնագիտական վերապատրաստման կենտրոնում **9** կին շահառու ուսուցանվում են «Կարի հիմունքներ», «Կոսմետոլոգիական հմտություններ», և «Վարսավիրական հմտություններ» իսկ **8**

տղամարդ շահառու՝ «Կահույքաշինության հիմունքներ» մասնագիտական որակավորման դասընթացներին

2022 թվականի ընթացքում կրթական միջոցառումներին մասնակցել են **57** շահառու:

Մշակութային միջոցառումներին մասնակցել են **158** շահառու, պրոբացիայի շահառուները դիտել են զանազան ներկայացումներ, ինչպես նաև այցելել են տարբեր մշակութային կենտրոններ, պատկերասրահներ և թանգարաններ:

Մարզական միջոցառումների մասնակցել են **50** շահառու:

Կրոնական միջոցառումներին մասնակցել են **127** շահառու:

Իրավաբանական խորհրդատվություն է տրամադրվել **1824** շահառուի, որից **97-ը** կանայք են և **12-ը** անչափահասներ, ընդ որում **2022թ.** ընթացքում իրավաբանական խորհրդատվություն տրամադրվել է **1572** շահառուի, որոնցից **134 շահառու** կանայք են, իսկ **11 շահառուն** անչափահաս:

Հոգեբանական աջակցություն տրամադրվել է **63** շահառուի, վերջիններիս նկատմամբ իրականացվել են անձնային աճի բարձրացման, հոգեկարգավորման, ագրեսիվության նվազեցման, կոնֆլիկտայնության նվազմանն ուղղված աշխատանքներ:

Բժշկական հաստատություններ և աջակցման կենտրոններ այցելության ուղղորդվել են **5** շահառու:

Վերասոցիալականացման այլ միջոցառումների մասնակցել են **258** շահառու.

Շահառուները մասնակցել են իրավագիտակցության բարձրացման, կախվածությունների հաղթահարման թրեյնինգների, ճանաչողական այց են կատարել Կոկա-կոլայի գործարանին կից թանգարան: Վանաձորի համայնքապետարանի հետ համագործակցության արդյունքում՝ համայնքի ղեկավարի որոշմամբ շահառուին տրամադրվել է հանրակացարանում սենյակ և այլն:

3. Էլեկտրոնային հսկողության ապահովում.

2023 թվականից Պրոբացիայի ծառայությունը սկսել է կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված այլընտրանքային խափանման միջոցներից տնային կալանքը և վարչական հսկողությունը: Հաշվետու ժամանակահատվածում

ծառայությունում ձեռք է բերվել 661 էլեկտրոնային հսկողության սարքավորում, որոնք կիրառվել են Պրոբացիայի ծառայության 866 շահառուի նկատմամբ:

4. Օրենսդրության կատարելագործում և իրավական ակտերի նախագծեր.

Պրոբացիայի ինստիտուտի զարգացման և կատարելագործման ուղղությամբ նպատակով մշակվել են «Պրոբացիայի ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Պրոբացիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 22-ին, որով փոխվել է Պրոբացիայի ծառայության կարգավիճակը և Պրոբացիայի ծառայությունը դարձել է պետական ծառայության առանձին տեսակ, ինչպես նաև ընդլայնվել են պրոբացիայի ծառայողների սոցիալական երաշխիքները:

ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 30-ի թիվ 452-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգը, որով կարգավորվել են այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցների կատարման, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջան նշանակելու, պատժի կատարումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացման, իրավաբանական անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցների կիրառման կարգն և պայմանները:

E-probation էլեկտրոնային համակարգ

2023թ. ընթացքում շարունակվել են E-probation էլեկտրոնային համակարգի բարելավման աշխատանքները: 2023 թվականին անցում է կատարվել E-probation էլեկտրոնային համակարգի, փաստաթղթաշրջանառությունն առաձնացվել է Mulberry 2

համակարգից: Հաշվետու ժամանակահատվածում բոլոր տարածքային մարմիններում անձնական գործերը վարվում են E-probation էլեկտրոնային համակարգի միջոցով:

5. Նյութատեխնիկական ապահովում և ծառայությունների ձեռքբերում.

2023 թվականի հոկտեմբերին մրցույթային ընթացակարգով ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա՝ 25 համակարգիչ՝ ամբողջը մեկում, 45 գրաֆիկական պլանշետ, մատնահետք կարդացող սարք՝ 45, 45 բաշխիչ սարք, 45 համացանցային տեսախցիկ՝ Ծառայության գործառույթների ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով իրականացնելու համար: 2023 թվականի հունիսին մրցութային ընթացակարգով «Կարկոմավտո» ՍՊԸ-ից ձեռք է բերվել երկու հատուկ մասնագիտացված ավտոմեքենա՝ որոնք ծառայելու են որպես շարժական գրասենյակ, և մեկ տասնյոթ տեղանոց միկրոավտոբուս՝ պրոբացիայի շահառուների՝ ուսումնական կենտրոն (ք. Արարատ) փոխադրումն ապահովելու, ինչպես նաև վերջիններիս մշակութային, կրթական, մարզական, կրոնական և այլ միջոցառումների մասնակցությունն ապահովելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ-ում Լեհաստանի դեսպանատան աջակցությամբ վերանորոգվել են Պրոբացիայի ծառայության Արարատի մարզային մարմնի գրասենյակները:

6. Համագործակցություն պետական և ոչ պետական կառույցների հետ

ՀՀ արդարադատության նախարարության Պրոբացիայի ծառայությունը համագործակցում է Եվրոպայի Խորհրդի գրասենյակի «Աջակցություն Հայաստանում Պրոբացիայի ծառայության հզորացմանը» ծրագրի շրջանակում: Ծրագիրը մեկնարկել է 2023 թվականի հունվարի 1-ից՝ 24 ամիս տևողությամբ:

ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համագործակցության շրջանակում 2023 թվականի մարտի 7-ից ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում մեկնարկեց 2023 թվականի կրթական ծրագիրը: 2023 թվականի կրթական ծրագրում ներառված են «Կահույքաշինության հիմունքներ», «Կարի հիմունքներ», «Վարսավիրական հմտություններ», «Կոսմետոլոգիական հմտություններ», «Օտար լեզու/անգլերեն», «Համակարգչային հմտություններ» դասընթացները, որին ներգրավված են Պրոբացիայի ծառայությունում հաշվառված թվով 28 պրոբացիայի շահառու:

Արդարադատության նախարարության Պրոբացիայի ծառայության պետ Արամ Նիկոյանի և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Շավարշ Գրիգորյանի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որի նպատակն է նպաստել միմյանց միջև փոխհամագործակցության ակտիվացմանը:

Պրոբացիայի ծառայության անդամակցելու վերաբերյալ հայտը վերանայվել է Եվրոպական պրոբացիայի կոնֆեդերացիայի (Confederation of European Probation – CEP) կողմից և 2023 թվականի նոյեմբերի 23-ին գրությամբ ստացվել է գրություն՝ 2024 թվականի հունվարի 1-ից որպես նոր անդամ ներգրավվելու մասին:

2023 թվականի դեկտեմբերի 13 թիվ CoE/LO(2023)0117 գրությամբ Եվրոպայի խորհուրդի Երևանի գրասենյակը պաշտոնապես համաձայնել է վճարել 2024 թվականի համար նախատեսված ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության Եվրոպական պրոբացիայի կոնֆեդերացիային (Confederation of European Probation – CEP) անդամակցության վճարը: